[327420]-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» [illegible] 2018. N 112-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ, ՏԱՐԵՑՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի հունիսի 11-ի N 700 – Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում (ցանկը կցվում է) մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խումբ (այսուհետ՝ խումբ) ձևավորելու և աշխատանքները կազմակերպելու կարգը՝ համաձայն հավելվածի.
2. Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ սույն հրամանի ստորագրումից հետո, ապահովել
1) հրամանի մասին տեղեկատվության տարածումը՝ այն տեղադրելով նախարարության պաշտոնական կայք էջում.
2) մեկամսյա ժամկետում՝ խմբի ձևավորման համար հայտարարության և դիմումի ձևի կազմումը, դիմումների հավաքումը.

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Զարուհի Բաթոյանին:

Մ.ԹԱՆԴԻԼՅԱՆ

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2018 թվականի հոկտեմբերի «18» -ի
N 112 - Ա հրամանի

ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խումբ ձևավորելու և աշխատանքները կազմակերպելու

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց պետական աջակցության շրջանակներում խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպություններում (այսուհետ՝ կազմակերպություն) մատուցվող ծառայությունների նկատմամբ հասարակական հսկողության ու մշտադիտարկման իրականացման նպատակով դիտորդական խմբի ձևավորման և մշտադիտարկման իրականացման կարգը:
2. Խումբը կազմակերություններում գտնվող անձանց խնամքի ծառայությունների տրամադրման ապահովման և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանության խնդիրներով զբաղվող անձանց միավորում է:
3. Խմբի գործունեության հիմնական նպատակներն են՝
1)կազմակերպություններում հասարակության կողմից մշտադիտարկումների իրականացումը՝ մարդու իրավունքների պաշտպանության ապահովվածության տեսանկյունից.
2) աջակցության ցուցաբերումը՝ անձանց խախտված իրավունքների վերականգնմանը և նման խախտումների կանխարգելմանը.
3) ոլորտային իրավական ակտերի ուսումնասիրությունը, և ըստ անհրաժեշտության, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին (այսուհետ՝ նախարար).
4) երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակային վերլուծությունների, եզրակացությունների, առաջարկությունների կազմում և ներկայացում նախարարություն, ինչպես նաև հանրությանը:

II. ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

4. Խմբի կազմը հաստատվում է նախարարի հրամանով:

5. Խմբի անդամ կարող է լինել հայերենին տիրապետող, քսանմեկ տարին լրացած ՀՀ քաղաքացին՝ անկախ ազգությունից, հաշմանդամությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ հանգամանքներից:
6. Խմբի անդամի ընտրության ժամանակ նախապատվությունը տրվում է իրավաբանի, մանկավարժի, բժշկի, սոցիալական աշխատողի, հոգեբանի մասնագիտություն և առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձանց, ինչպես նաև այն անձին կամ անձին ներկայացնող հասարակական կազմակերպությանը, որի գործունեությունը առավել սերտ է առնչվում նախարարության նպատակներին և խնդիրներին, մասնավորապես՝ տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների հիմնահարցերին, ինչպես նաև խրախուսվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը:
7. Խմբի անդամության հավակնորդը նախարարություն է ներկայացնում գրավոր դիմում, որին կցվում է նրա անձնագրի պատճենը, ինքնակենսագրությունը, նրան ներկայացնող հասարակական կազմակերպության երաշխավորագիրը, այդ կազմակերպության կանոնադրությունը և գործունեության համառոտ նկարագիրը:
8. Խմբի կազմում ընդգրկվելու վերաբերյալ դիմումների ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո ոչ ուշ, քան մեկշաբաթյա ժամկետում սույն հրամանի 5-6-րդ կետերով սահմանված չափորոշիչներին համապատասխան ընտրված՝ խմբի անդամների կազմը նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետի կողմից ներկայացվում է նախարարի հաստատմանը, նախապես այն համաձայնեցնելով նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի, ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունների պետերի և նշված ոլորտները համակարգող նախարարի տեղակալների հետ:
9. Խմբի կազմում ընդգրկվելու կամ դիմումը մերժելու մասին դիմողը տեղեկացվում է եռօրյա ժամկետում:
10. Խմբի կազմը հաստատելու մասին նախարարի հրամանը եռօրյա ժամկետում տեղադրվում է նախարարության պաշտոնական կայքէջում:
11. Խումբը կարող է ունենալ 9-11 անդամից: Յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն կամ կազմակերպությունների միություն խմբի կազմում կարող է ունենալ մեկ ներկայացուցիչ: Խմբի անդամի լիազորությունները տրվում են երեք տարի ժամկետով և չեն կարող երկարաձգվել:
12. Խմբի անդամին նախարարության կողմից տրվում է անդամությունը հաստատող փաստաթուղթ՝ վկայական, որը նա պետք է կրի կազմակերպությունում գտնվելու ամբողջ ընթացքում:
13. Խմբի ձևավորումից հետո, նոր անդամի՝ խմբում ընդգրկման մասին որոշումը կայացնում է խումբը՝ անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, որից հետո այդ որոշումը ներկայացնում է նախարարի հաստատմանը:
14. Կազմակերպությունները պետք է ունենան խմբի անդամների ցուցակը, իսկ ցուցակում փոփոխություններ կատարվելու դեպքում, խումբը պարտավոր է այդ մասին անմիջապես տեղեկացնել կազմակերպությանը:
15. Խումբն իր կազմից մեկ տարի ժամկետով ընտրում է նախագահ, անհրաժեշտության դեպքում՝ նաև տեղակալ կամ տեղակալներ: Խմբի նախագահը

(նրա բացակայության դեպքում՝ տեղակալը կամ տեղակալներից մեկը) ղեկավարում է խմբի գործունեությունը: Նույն անձը կարող է ընտրվել խմբի նախագահ առավելագույնը երկու անգամ անընդմեջ:

III. ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

16. Խումբը գործում է հասարակական հիմունքներով:
17. Իր գործունեության շրջանակներում խումբն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն Կարգով և խմբի գործունեության էթիկայի կանոններով:
18. Կազմակերպությունում մշտադիտարկումներ իրականացնելու նպատակով խումբը կատարում է այցելություններ, օրենքով սահմանված կարգով, ուղղում է հարցադրումներ համապատասխան մարմիններին և կազմակերպություններին:
19.Այցելությունները հիմնականում կատարվում են աշխատանքային օրերին և ժամերին: Յուրաքանչյուր կազմակերպությունում տարեկան կատարվում է առնվազն երկու պլանային այցելություն:
20. Յուրաքանչյուր այցելություն պետք է կատարվի խմբի առնվազն երեք անդամի կողմից:
21. Այցելությունները կարող են կատարվել նաև ոչ աշխատանքային օրերին և ժամերին, եթե առկա է հրատապ արձագանքման անհրաժեշտություն: Ոչ աշխատանքային ժամերին իրականացվող այցելությունը պետք է լինի պատճառաբանված և հիմնավորված՝ ելնելով վերոնշյալ սկզբունքից, չխախտելով կազմակերպության բնականոն գործունեությունը:
22.Խմբի անդամներն իրավունք ունեն այցելել կազմակերպության ցանկացած տարածք՝ կազմակերպության ներկայացուցչի ուղեկցությամբ, կարող են առանձնազրույց ունենալ կազմակերպության ծառայություններից օգտվող անձանց և աշխատակիցների հետ, ծառայություններից օգտվող երեխաների դեպքում՝ կազմակերպության մանկավարժի կամ հոգեբանի գրավոր համաձայնությամբ, նույնպես չխախտելով կազմակերպության ներքին կանոնակարգը:
23.Խմբի անդամները իրավունք ունեն ծանոթանալ կազմակերպության փաստաթղթերի բովանդակությանը՝ կազմակերպության պատասխանատու աշխատակցի ներկայությամբ, պահպանելով կզմակերպությունների շահառուների անձնական տվյալների գաղտնիության սկզբունքը:

IV. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

24. Մշտադիտարկումն իրականացվում է կազմակերպություն այցելությունների և դրանց հիման վրա նախարարությանը հաշվետվությունների և հրապարակային առաջարկությունների և զեկույցների ներկայացման ձևով.
25. Յուրաքանչյուր այցի վերաբերյալ խմբի՝ այցելություն կատարած բոլոր անդամների կողմից ստորագրված հաշվետվությունը ներկայացվում է խմբի նախագահին (հաշվետվության ներկայացման ժամկետները և ձևաչափը սահմանվում են խմբի գործունեության ներքին կանոններով):
26. Ներկայացված հաշվետվությունների հիման վրա պատրաստվում են տարեկան զեկույցներ: Ըստ անհրաժեշտության, կարող են պատրաստվել և ներկայացվել նաև

հրատապ և ընթացիկ զեկույցներ, ինչպես կոնկրետ կազմակերպությունում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ, այնպես էլ մի քանի կամ գործող բոլոր կազմակերպություններում: Խմբի անդամների կողմից պատրաստված բոլոր տեսակի փաստաթղթերը մինչև հրապարակելը ուղարկվում է նախարարություն՝ մեկնաբանության համար, որից հետո միայն հրապարակվում:
27. Խմբի կողմից ներկայացված զեկույցների վերաբերյալ նախարարությունը ներկայացնում է իր մեկնաբանությունները. տարեկան զեկույցների վերաբերյալ երեք ամսվա, ընթացիկ զեկույցների վերաբերյալ՝ մեկ ամսվա, իսկ հրատապ զեկույցների դեպքում՝ հնգօրյա ժամկետում: Մեկնաբանությունները հրապարակվում են զեկույցի հետ համատեղ: Եթե մեկնաբանությունները չեն ներկայացվել սահմանված ժամկետներում, զեկույցները կարող են հրապարակվել առանց մեկնաբանության:
28. Զեկույցները հաստատվում են Խմբի որոշմամբ, նիստին ներկա անդամների ձայների մեծամասնության համաձայնությամբ (քվեարկության կարգը սահմանվում է խմբի գործունեության ներքին կանոններով):
29. Եթե խմբի որևէ անդամ կամ անդամներ համաձայն չեն զեկույցի հետ, կարող են ներկայացնել այլընտրանքային զեկույց կամ հատուկ կարծիք:
30. Խմբի յուրաքանչյուր անդամ պարտավոր է մասնակցել խմբի նիստերին և կատարել տարեկան առնվազն 22 այցելություն և դրանց վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն: Դա չկատարելու դեպքում խումբը քննարկում է նրան անդամությունից զրկելու հարցը:
31. Անհրաժեշտության դեպքում խմբի նախագահը՝ նախարարության գրավոր միջնորդությամբ, խմբի գործունեության շրջանակներում մշտադիտարկման աշխատանքներին կարող է ներգրավել համապատասխան մասնագիտական ուղղվածության փորձագետների: Խմբի միջնորդությամբ նախարարությունը փորձագետին տալիս է ժամանակավոր անցաթուղթ՝ կազմակերպություն այցելելու համար: Փորձագետը կազմակերպություն կարող է այցելել միայն խմբի անդամների հետ:

V. ԽՄԲԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

32. Խումբն առնվազն եռամսյակը մեկ անգամ հրավիրում և անց է կացնում նիստեր: Նիստերը որպես կանոն, անց են կացվում դռնբաց, իսկ խմբի որոշմամբ քվեարկությունը կարող է լինել նաև փակ՝գաղտնի: Խմբի որոշմամբ նիստերին կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները: Յուրաքանչյուր նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ նիստի օրակարգն ուղարկվում է խմբի բոլոր անդամներին և նախարարություն:
33. Խմբի արտահերթ նիստ կարող է հրավիրել՝
1) խմբի յուրաքանչյուր անդամ.
2) նախարարը:
34. Նիստը համարվում է կայացած, եթե ներկա է խմբի անդամների կեսից ավելին: Որոշման ընդունման համար անհրաժեշտ է խմբի անդամների ձայների կեսից ավելին, բացառությամբ՝ խմբի գործունեության ներքին կանոնները, էթիկայի կանոնները հաստատելու և խմբի անդամի լիազորությունների դադարեցման համար ներկայացված միջնորդության քննարկման հետ կապված դեպքերի, որոնց համար անհրաժեշտ է ձայների 2/3-ը:

35. Ընթացիկ, տարեկան կամ հրատապ զեկույցների հաստատման որոշման տակ ստորագրում են խմբի բոլոր անդամները, ընդ որում, եթե խմբի որևէ անդամ համաձայն չէ որոշմամբ հաստատված զեկույցի որևէ կետի հետ, ապա այդ մասին կատարվում է համապատասխան նշում կամ զեկույցին կից ներկայացվում է մասնավոր կարծիք:

VI. ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

36. Խմբի անդամի լիազորությունները դադարեցվում են նախարարի հրամանով, եթե՝

1) լրացել է խմբի անդամի լիազորությունների ժամկետը.

2) առկա է խմբի որոշում՝ խմբի որևէ անդամի լիազորությունները ժամկետից շուտ դադարեցնելու վերաբերյալ.

3) առկա է խմբի անդամի դիմումը իր լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ.

4) առկա է խմբի անդամի թեկնածությունը ներկայացրած հասարակական կազմակերպության կամ կազմակերպությունների միության դիմումը խմբի անդամի լիազորությունների դադարեցման կամ նրան մեկ այն անդամով փոխարինելու վերաբերյալ: